ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՀՀ-ԼՄՀ-ՄԱԱՇՁԲ-18/04

ք. Վանաձոր «05» ապրիլի 2018թ.

«Հարինգ» ՍՊԸ այսուհետև «Մատակարար» , ի դեմս Կ. Ծատուրյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա մի կողմից և ***<<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկն***, այսուհետ՝ «Գնորդ», ի դեմս *համայնքի ղեկավար Մ. Ղարաքեշիշյանի,* որը գործում է կանոնադրության հիման վրա մի կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Մատակարարը պարտավորվում է կատարել աղբահանության կտրոնների և պայմանագրերի, բացիկների, պատվոգրերի և շնորհակալագրերի տպագրության աշխատանքներ:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1 Գնորդը իրավունք ունի կատարված աշխատանքների որակը ստուգել տեղում, չհամապատասխանելու դեպքում անմիջապես վերադարձնել կամ փոխել:

2.2.Մատակարարը պարտավոր է կատարված աշխատանքների որակը ստուգել տեղում, չհամապատասխանելու դեպքում՝ չմատուցել:

2.3. Մատակարարը մատուցած աշխատանքը ետ չի ընդունում:

3. Պայմանագրի գործողության ժամկետը, գինը, գնի վճարման ժամկետը և կարգը

3.1. Պայմանագրով նախատեսվում է «Գնորդին» մատակարարել <u>239800 (երկու հարյուր երեսունինը հազար ութ հարյուր)</u> դրամ արժողությամբ աշխատանք:

3.2 Պայմանագրով նախատեսված գումարը վճարվում է Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, աշխատանքը ստանալուց առաջ:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Պայմանագրի 3.2 կետում նշված վճարման ժամկետը խախտելու դեպքում Մատակարարին վճարում է տուգանք՝ կատարված աշխատանքի գումարի 0.2% -ի չափով՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար:

5. Վեճերի լուծման կարգը

Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

6. Եզրափակիչ դրույթներ

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի վավերացման պահից և ուժի մեջ է մինչև «25» դեկտեմբերի 2018թ.:

6.2. Պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից՝ մեկական օրինակ յուրքանաչյուր կողմի մոտ:

7. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Գնորդ	Մատակարար
<<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկ	«Հարինգ» ՍՊԸ ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22 ՀՎՀՀ 06937776 հ/հ 2050222016071002 «Ինեկոբանկ» ՓԲԸ, Վանաձորի մ/ճ
Հասցե <u>հ. Ստեփանավան, Սոս Սարգսյան 1</u>	
ՀՎՀՀ <u>06954104</u>	
Հ/հ բանկ <u>900256101016</u>	
Համայնքի ղեկավար՝ _____ Մ. Ղարաքեշիշյան	_____ Կ. Ծատուրյան